«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների քննադատական մտածողության զարգացումը օտար լեզվի ուսուցման գործընթացում

Առարկա՝ Ռուսաց Լեզու

Հետազոտող ուսուցիչ՝ Վարդուհի Միերյան

Ուսումնական հաստատություն՝ Մխչայանի Ք. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....2
Սովորողների քննադատական մտածողության զարգացումը օտար լեզվի ուսուցման գործընթացում

Եզրակացություն.....21

Օգտագործված գրականության ցանկ.....22

Ներածություն

Թեմայի արդիականությունը:

Քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումն այսօր հանդիսանում է կրթության գլխավոր նպատակներից և ուղղություններից մեկը:Այն շատ կարևոր գործընթաց է այսօրվա ուսումնառության գործընթացում :

Ժամանակակից աշխարհում քննադատական մտածողության կարևորությունն էլ ավելի է աճում, քանի որ տեղեկատվական հոսքերի բազմազանության ու արագության պայմաններում մարդուն անհրաժեշտ են գործիքներ ու մեթոդներ, որոնք նրան հնարավորություն կտան ֆիլտրել, դասակարգել և գիտելիքի վերածել այն տեղեկատվությունը, որն իրեն անհրաժեշտ է: Քննադատական մտածողությունը, հանդիսանալով մտածողության ձև, դատողություններ անելու մեթոդ առաջարկում է մի շարք գործիքներ ու հնարքներ, որոնք հնարավորություն են տալիս մարդուն հաղորդակցվել ու ստացված տեղեկատվությունը վերլուծել այնպես, որ դատողությունները կախված չլինեն կարծրատիպերից, իսկ տեղեկատվությունը վերածվելով գիտելիքի կարողանա գործառնական կիրառում ստանալ:

Նախ և առաջ ասելիքը (կամ գրելիքը) պետք է դարձնել փաստարկված՝ արգումենտացված (լեզվի ու տրամաբանության տեսակետից), ինչպես նաև փաստերով հարուստ և հղումներով, քանի որ մեր նպատակն է՝ հավաստի տեղեկություն հաղորդել, և եթե նույնիսկ դա վերջնական ճշմարտությունչէ՝ ապա համոզել, որ մեր կարծիքը լեգիտիմ է: Այսինքն՝ որքան կարելի է ավելի լեգիտիմ, վստահելի դարձնել մեր ասելիքը (գրելիքը):

Թեմայի նպատակը:

Դպրոցներում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունների բացահայտումն ու հիմնավորումն է՝ որպես օտար լեզվի միջոցով զարգացնել սովորողների ճանաչողական կարողությունները:

Խնդիրները:

Ուսումնասիրել ոչ միայն դիմացինի, այլ նաև սեփական սխալները: Ինչո՞ւ է հարցականի տակ դրվում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքը:

Նկարագրել ինչ նպատկ ունենք և ինչ արդյունավետ գործիք ենք առաջարկում՝ բացահայտելու համար այն ինչ էթիկապես արդար է և ճշմարիտ:

Իրականացնել քննադատական մտածողության զարգացման քայլեր, նոր հարցեր՝ պահնջներ դնելու ունակություն:

Սահմանել պայման,պահանջ՝ «Մտածողություն մտածողության մասին»:

Պարզել ըստ իրավիճակի ձևավորված կարծիքը հարցերի միջոցով:

Ի՞նչ նկատի ունեիք ասելով - - - Ինչո՞ւ եկաք այդ եզրահանգմանը - - -

Ո՞րն է Ձեր տեղեկության աղբյուրը - - - Ենթադրեք, որ դուք ճիշտ չեք - - -

Ինչպե՞ս համոզվել, որ այն ինչ դուք ասում եք ճշմարիտ է - - -

Ի՞նչ այլ պատճառաբանություններ կներկայացնեք այս կարծիքի շուրջ - - - Ապացուցել տարբեր հնարների միջոցով:

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը օտար լեզվի ուսուցման գործընթացում:

Օտար լեզվի դասավանդման մեջ կարևոր տեղ է զբաղեցնում քննադատողական վերլուծությունը: Հատկապես գրական կերպարները վերլուծելիս սովորողները հնարավորություն ունեն կերպարներին վերլուծել ՝ հայտնելով իրենց տեսակետը, ինչն էլ քննադատական մտածողության հիմնաքարերից մեկն է:

Ելնելով այս դիրքորոշումից դասավանդման ընթացքում կիրառելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներ ու հնարներ՝ համոզվել ենք, որ սովորողները կարող են սովորել քննադատաբար մտածել, լինել իրենց ուսումնառության ակտիվ դերակատարները, համագործակցել իրենց դասընկերների հետ: Աշակերտները դառնում են ակտիվ սովորող, մտածող և ստեղծագործող անհատներ: Արդունավետ քննադատական մտածողություն դրսևորելու համար նրանք պետք է.

- Զարգացնեն իրենց ինքնավստահությունը և հասկանան, որ իրենց կարծիքներնու մտքերն արժեքավոր են,
- Ակտիվորեն մասնակցեն ուսումնական գործընթացին,
- Հարգանքով լսեն բազմազան կարծիքներ,
- Պատրաստ լինեն և ձևակերպել, և հարկ եղած դեպքում նաև կասեցնել սեփական դատողությունները:

Յուրաքանչյուր առարկայի ծրագրով նախատեսված գիտելիքների ուսուցումը չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որոնք սովորողը պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն հիմնականն է, որ անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը սովորողները իրենք պետք է ինքնուրույն կերպով ստանան շրջապատից ու գրքերից:

Այսինքն, յուրաքանչյուր ուսուցչի գերխնդիրն է սովորել սովորեցնելը:

Օրինակ՝ երկրորդ դասարանի երկրորդ կիսամյակում աշակերտներն աստիճանաբար սովորում են առանց ուրիշի օգնության կարդալ անծանոթ գիրքը, գտնել վերնագիրը,

հեղինակի անունը, դիտել նկարազարդումները և դրանց հիման վրա որոշել գրքի թեման: Գրական ունկնդրման դասաժամը կազմակերպելիս պետք է նկատառել սովորողների պատրաստվածության մակարդակը, ծնողների սոցիալական վիճակը, դասարանի և դպրոցի գրադարանի ֆոնդը, երեխաների հետաքրքրությունների շրջանակը: Այս ամենը հաշվի առնելով՝ ընթերցանության ստեղծագործությունների ընտրությունը պետք է կատարվի հետևյալ պայմանների առկայությամբ.

1. Բնագիրը պետք է լինի ծավալով փոքր՝ պարզ, մատչելի, թեման հոգեհարազատ, գաղափարը՝ հասկանալի:
2. Ինքնուրույն ընթերցանության համար ընտրված գրքերը գեղարվեստական ձևավորմամբ պետք է լինեն այնպիսին, որ երեխաները հետաքրքրվեն նկարազարդումներով, հրճվեն հերոսների նկարներով:

Ընթերցանություն կազմակերպելիս պետք է կրտսեր դպրոցականների մեջ սերմանել ընթերցասիրություն, զարգացնել գեղարվեստական ստեղծագործության գաղափարը հասկանալու, եզրահանգումներ, ընդհանրացումներ անելու կարողություններ: Նպաստել նրանց մեջ անձնային բարձրարժեք որակների զարգացմանը, գրագետ ընթերցողի, կարդալու պահանջմունք ունեցող քաղաքացու դաստիարակմանը:

Հաճախ ենք հանդիպում աշակերտների, որոնք նոր են կարդացել ու շատ քիչ բան են հասկացել: Վատ ընկալունակությունը բացատրվում է պարզ պատճառով, պարզապես ուշադիր չեն կարդում: Նրանք չգիտեն ինչպես կարդան, որ կենտրոնանան հիմնական մտքերի վրա: Ուսուցիչներս տիրապետելով քննադատական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդներին ու հնարներին՝ կարող ենք օգնել աշակերտներին՝ խորհել կարդացածի մասին:

Դեռևս ամառային արձակուրդներին աշակերտներին առաջարկում ենք ընթերցել իրենց նախընտրած ստեղծագործությունները: Նախապես պետք է ընտրել այնպիսի գրականություն, որն աչքի ընկնի պարզությամբ, մատչելիությամբ, խոր գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորմամբ: Նման ստեղծագործությունները երեխաների մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ կառաջացնեն: Նրանք կզգան ու հոգեպես կվերապրեն այն ամենը, ինչ նկարագրված է գրքում: Երբ աշակերտներին թույլ է տրվում ընտրել ինչ կարդալ, նրանք սկսում են կարդացածի հանդեպ սեփականության զգացում ունենալ: Դա առաջին

վճռորոշ քայլն է, որն ընթերցողին դարձնում է ներգրավված:

Առաջիան դասին ուսուցիչը հատկացված դասաժամին յուրաքանչյուրը ներկայացնում է իր ընթերցած գիրքը գովազդի տեսքով՝ առանց բովանդակությունը պատմելու: Յուրաքանչյուր աշակերտ ձգտում է առավելագույնս ձևով ներկայացնել գովազդը, որպեսզի իր ընկերների ընտրությունը կանգ առնի իր նախընտրած գրքի վրա, և բոլորն ընթերցեն այն: Ապա ուղղում ենք հարցեր.

__ Ինչու՞ ես ընտրել այդ գիրքը: Ինչպե՞ս է այն կարդացվում: Դու ծանո՞թ ես այդ հեղինակի որևէ այլ ստեղծագործության: Անծանոթ բառեր կայի՞ն: Ինչպե՞ս իմացար դրանց բացատրությունը:

Այնուհետև քվեարկում ենք և ըստ քվեարկության արդյունքների ընտրում որևէ մեկի ընթերցած գիրքը ու որոշում այն ընթերցել: Միասին սահմանում ենք այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է աշակերտներին գիրքն ընթերցելու համար: Հաշվի է առնվում տվյալ գիրքն ընթերցած աշակերտի կարծիքը: Նրանք պետք է իմանան ընթերցանությանը հատկացվող ժամանակը, որպեսզի կարողանան պլաններ կազմել: Ընթերցելուց հետո պետք է մասնակցեն քննարկմանը: Նման հանձնարարությունն օգնում է աշակերտներին ընթերցման ժամանակ ուշադրություն դարձնել այնպիսի մանրամասների վրա, որ նախկինում չէին նկատել:

Մինչ կարդալ սկսելը մտագրոհի միջոցով կազմում ենք բնագրի իմաստի կանխավարկածը: Եթե ընթերցողը նախօրոք գիտի, որ ինքը պատմվածք է կարդալու, ապա մինչ բուն ընթերցանությունն սկսելը փորձում է վերնագիրն ու նկարները օգտագործել որպես բանալի՝ պատմվածքի բովանդակությունը կռահելու համար: Այս դեպքում նա կանգնած է լավ ընկալման շեմին: Տրված ժամանակը լրանալուց հետո սկսվում է քննարկման դասաժամը: Աշակերտները բաժանվում են 4-5 խմբերի: Նրանց ուղղվում են հարցեր, որոնց պատասխանները քննարկվելու են:

__Ի՞նչը ձեզ դուր եկավ այս գրքում: Ի՞նչը դուր չեկավ: Ինչպե՞ս էր գիրքն սկսվում: Ինչպե՞ս ավարտվեց: Արդյո՞ք ընդունելի ավարտ էր: Ի՞նչն էր կարևոր: Գիրքն ընթերցելուց հետո ի՞նչ մտքեր են ծագել ձեր գլխում: Ի՞նչն այլ կերպ կանեիք, եթե կերպարներից մեկը լինեիք: Ի՞նչ սովորեցիք հերոսներից: Ո՞ր կերպարն ամենաշատը ձեզ դուր եկավ: Ի՞նչ հասկացաք՝ կարդալով այս գիրքը: Կարո՞ղ եք այլ ավարտ հորինել: Ինչպիսի՞ն էր տրամադրությունը: Ի՞նչ կարևոր իրադրություն եք վերհիշել: Ո՞րն էր ձեր սիրելի հատվածը: Այս գիրքը ձեզ որևէ դեպք կամ որևէ բան հիշեցնու՞մ է: Ձեր կարծիքով ինչու՞ է հեղինակը գրել այս գիրքը:

Այնուհետև խմբերն իրենց ընտրությամբ թղթապանակ են պատրաստում տվյալ գրքի վերաբերյալ: Խմբի անդամների միջև կատարում ենք աշխատանքի բաժանում ընտրելով խորագրեր:

__ Պատմվածքի քարտեզը

__ Հեղինակի մասին

__ Պատմվածքի մանրակերտը

__ Մեր տպավորությունը

__ Գլխավոր հերոսի բնութագիրը

__ Նամակ հերոսին

__ Հերոսի կողմից նամակ

__ Պատմվածքի տարբեր հատվածների նկարազարդումը

Խոսնակները ներկայացնում են իրենց խմբերի աշխատանքները, դրանք փակցվում են միջանցքում, որպեսզի մյուս դասարանների աշակերտները հետաքրքրվեն այդ պատմվածքով և ցանկանան ընթերցել այն:

Երբ նույն պատմվածքն ընթերցում են բոլորը և քննարկում, ապա այդպիսի ընթերցանությունը կմիավորի երեխաներին և նրանց մեջ կզարգանա համագործակցային և հաղորդակցական հմտություններ:

Ինքնուրույն ընթերցանության նման ձևով կազմակերպումը նպաստավոր պայմաններ է ստեղծում, որպեսզի աշակերտների մեջ արթնանա ընթերցանության հանդեպ սեր, նրանք գնահատեն իրենց ընթերցածը, կարողանան ընթերցանության միջոցով ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ և վերահսկեն իրենց ընթերցածը:

Աշակերտներին ընթերցասեր դարձնելու համար անհրաժեշտ է լուրջ ակնկալիքներ ունենալ յուրաքանչյուրից: Նպաստել երեխաների քննադատական մտածողության զարգացմանը, նրա տարիքին համապատասխան նշանակում է ուրախ, հրապուրիչ դարձնել և հույզերով հագեցնել նրա մանկությունը:

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար

հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր: Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռքբերում, յուրացում ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում:

Վերը նշված կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան:

Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրները դիտարկել են 20-րդ դարի վերջերին ԱՄՆ-ի հոգեբան-մանկավարժներ Ջ.Լ.Սթիլը, Ք.Ս.Մերեդիթը, Չ.Թեմփլը, ինչպես նաև Բ.Բլումը, Դ . Հուսլպերնը, Դ . . Քլուսթերը և ուրիշներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման խնդիրներին ու արդյունավետությանը ավելի ուշ անդրադարձել են ժամանակակից մանկավարժներ Գ.Սելեվկոն, Ի.Զագաշևը, Ս.Զաիր-Բեկը, Ի.Մուշտավինսկայան, Մ.Կլարինը, Վ.Կուկուշինը, Վ.Միժերիկովը և այլք: Քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման միջոց դեռևս չի ենթարկվել ամբողջական գիտամանկավարժական ուսումնասիրման ու վերլուծության:[1]

Այսօր ժամանակակից հասարակությանը պետք է այնպիսի կրթություն, որը

հասարակության յուրաքանչյուր անդամին հնարավորություն կտա զարգացող ու փոփոխվող աշխարհում քայլել այդ փոփոխություններին համընթաց՝ անընդհատ զարգացնել մտավոր կարողությունները, լինել նախաձեռնող ու ստեղծագործական մոտեցում ցուցաբերել կյանքի տարբեր բնագավառներում:

Մանկավարժության նկատմամբ նոր պահանջները, ինչպես նաև սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում տեղի ունեցող էական փոփոխությունները, գիտության ու տեխնիկայի մեծ արագությամբ ընթացող առաջընթացը, տեղեկատվության կուտակումը հանգեցրին կրթության համակարգի արդիականացման, նորարարական գործունեության և կրթական բարեփոխումների իրականացման անհրաժեշտության:

Ճանաչողության հիմնախնդիրը բավականին ծավալուն քննարկվում է փիլիսոփայական գրականության մեջ: ճանաչողության խնդրի պարզաբանմանը, սովորողների ճանաչողական ակտիվությանը, ճանաչողական կարողությունների հետաքրքրությունների ձևավորմանն ու զարգացմանը անդրադարձել են նաև բազմաթիվ մանկավարժներ: ճանաչողությունն ակտիվ գործընթաց է, այն ուսումնասիրվում է ուսուցման գործընթացի հետ փոխկապվածության մեջ և անմիջականորեն կապված է պրակտիկայի հետ: ժամանակակից

մանկավարժահոգեբանական հետազոտությունները /Լ.Զանկով, Ղելկոնին, Վ.Դավիդով, ժ,Պիաժե և այլք/ վկայում են, որ առավել նպատակահարմար է երեխաների ճանաչողական հետաքրքրությունների, ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը սկսել վաղ տարիքից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է որոնել, մշակել և ներդնել կրտսեր դպրոցականների ճանաչողական ակտիվության, ճանաչողական հետաքրքրության ու ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը միտված նոր մոտեցումներ ու գաղափարներ, քանի որ դա դպրոցում ուսուցման գործընթացի հաջողության, արդյունավետության գլխավոր պայմաններից մեկն է:

Ուսուցման գործընթացում սովորողների ակտիվ մասնակցությամբ, ուսման դրական դրդապատճառների շնորհիվ դրսևորվում են ճանաչողական հետաքրքրություններ, ուսումնական նյութի նպատակաուղղված ակտիվ ընկալում, իմաստավորում ու առավել խորությամբ յուրացում:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան միավորել ու իր մեջ է ամփոփել վերը նշված մանկավարժական տեխնոլոգիաների արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ: Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է որպես տարրական

դպրոցում կիրառելի ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանիոր այն ուղղված է սովորողների պասսիվվերարտադրողի դերը ակտիվ մասնակցի դերովփոխարինելուն, սովորողների բնականոն զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն, երեխաների տարիքային ու անհատական առանձնահատկություններին համապատասխան պայմաններ, աշխատանքի տեմպ ու կազմակերպման ձև ապահովելուն:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումն իրականացվում է ըստ հստակսահմանված փուլերի՝ խթանում, իմաստավորում և կշռադատում /ԽԻԿ համակարգ/:Այս համակարգնուղղված է սովորողների ճանաչողական կարողությունների զարգացմանը, որի շնորհիվխթանվում ու վեր են հանվում սովորողների ունեցածգիտելիքները, իմաստավորվում և կշռադատվում էուսուցանվող նյութը՝ վերլուծության, համադրության, համեմատությունների ու եզրահանգումներիմիջոցով: Քննադատական մտածողությանտեխնոլոգիան հանդես է գալիս որոշակիմեթոդախմբով, ընդ որում յուրաքանչյուր մեթոդկիրառվում է ԽԻԿ համակարգի կոնկրետ փուլում՝ ելնելով տվյալ մեթոդի նպատակներից: Օրինակ՝ մտավոր գրոհ մեթոդը կիրառելի է խթանմանփուլում, իսկ հինգ րոպեանոց շարադրանքի մեթոդըկամ Վեննի դիագրամ մեթոդը միայն կշռադատմանփուլում և այլն:

քննադատական մտածողության տեխնոլոգիայիմեթոդները տարրական դպրոցում կիրառելի ենմիայն որոշակի փոփոխությունների, պարզեցումների արդյունքում: Ուստի նախագծի մեջներկայացված մեթոդները համապատասխանեցվելեն դպրոցին, օրինակ՝ մտավոր գրոհ, քառաբաժանում, ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒԱ/, Վեննի դիագրամ, հնգյակ, կանխագուշակումների աղյուսակ, կենսագրականբանաստեղծություն, աքրոստիկոս և այլ մեթոդներ: Յուրաքանչյուրը դիտարկվել է հետևյալ սկզբունքով՝ ինչին է նպաստում, ինչպես է իրականացվում և ինչպես կարող է կիրառվել դպրոցում: Օրինակ՝ ջիգսո /խճանկար/ մեթոդը առավելապես նպաստումէ սովորողների համագործակցայինկարողությունների ձևավորմանը: Այն դպրոցում անհրաժեշտ է կիրառել միայն փոքրածավալ, պարզ մատչելի բովանդակությամբ նյութի ուսումնասիրման ժամանակ: Աշխատանքային խմբերը պետք է լինեն փոքրաքանակ: Խմբայինաշխատանքների ժամանակ դպրոցականներինկարելի է թույլատրել նշումներ անել, որպեսզիչդժվարանան և չհոգնեն:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայիմեթոդները խմբավորվել են հիմք

ընդունելով «Հանրակրթության պետական չափորոշ չիբաղադրիչները: Այսպես, օրինակ'

• գիտելիքների համակարգ ձևավորող մեթոդներնեն' մտավոր գրոհ, փոխգործուն նշաններ, խմբավորում և այլն:

• ճանաչողական կարողություններ և հմտություններձևավորող մեթոդներն են' Վեննի դիագրամ, խորանարդում, քառաբաժանում, պրիզմա, մանրապատում /կմախք/ և այլն:

• հաղորդակցական կարողություններ ևհմտություններ ձևավորող մեթոդներն են' հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, «Հաստ» և «բարակ» հարցեր և այլն:

• համագործակցային կարողություններ ևհմտություններ ձևավորող մեթոդներն են' ջիգսո /խճանկար/, շրջանաձև շարադրանք և այլն:

• ստեղծագործական կարողություններ ևհմտություններ ձևավորող մեթոդներն են' հնգյակ, բանալի բառեր, աքրոստիկոս և այլն:

• ինքնուրույն գործունեության կարողություններ ևհմտություններ ձևավորող մեթոդներն են' ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒՍ/, երկու աստղև մեկ ցանկություն և այլն:

• արժեքային համակարգ ձևավորող մեթոդներն են' ռուբրիկ, հեղինակի աթոռ մեթոդները:

Իրականացված խմբավորումը պայմանական է, քանի որ քննադատական մտածողությանտեխնոլոգիայի որոշ մեթոդներ կարելի էմիաժամանակ դիտարկել չափորոշչի մի քանիբաղադրիչների տեսանկյունից: Մեթոդներըխմբավորվել են' ելնելով դրանց առաջնային նպատակներից:

Դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կլինի արդյունավետ մի շարք մանկավարժական պայմանների առկայության դեպքում.

• բարենպաստ և զարգացնող կրթական միջավայրի ապահովում,

• սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում,

• ուսուցման գործընթացի միջոցների, մեթոդների, ընթացակարգի ճիշտ ընտրություն,

• ուսումնական գործունեության բազմազան տեսակների կիրառում,

• ուսման դրական ու ներքին դրդապատճառների ձևավորում,

• դասարանում դրական հոգեբանական մթնոլորտի ապահովում

• ուսուցչի մասնագիտական պատրաստվածության առկայություն:

Քննադատական մտածողությանը նվիրված հետազոտությունների ուսումնասիրման հիման վրա ներկայացնելու ենք ուսումնական գործընթացում ավագ դպրոցականների քննադատական մտածողության զարգացման պայմանները, գործոնները, մեթոդները, աշխատանքի ձևերը:

Քննադատական մտածողության զարգացումը կարևորվում է հանրակրթության բոլոր աստիճաններում, ընդսմին յուրաքանչյուր աստիճան ունի իր խնդիրները, բովանդակությունը, մեթոդները, միջոցները, տեխնոլոգիաները, աշխատանքի կազմակերպման ձևերը: [2]

Ավագ դպրոցական տարիքում քննադատական մտածողության զարգացումն առավել է կարևորվում. պատանեկության կենսափուլում առաջնային են դառնում կենսական խոր բովանդակությամբ հարցադրումները, մասնագիտական կողմնորոշումները, աշխարհի նկատմամբ գնահատողական վերաբերմունքը, ինքնահաստատման, ինքնադրսևորման, ճանաչողական գործունեության նոր ձևերի տիրապետման պահանջմունքը, որոնք պահանջում են քննադատական մտածողության զարգացման անհրաժեշտություն:

Ուսումնական գործընթացում կարելի է առանձնացնել քննադատական մտածողության զարգացման հետևյալ գործոնները՝

- ✓ դրդապատճառային՝ հետաքրքրություն ուսումնասիրվող նյութի նկատմամբ
- ✓ կազմակերպչական-մեթոդական՝ աշխատանքի կազմակերպման ձևերը, մեթոդները, միջոցները, եղանակները, դասավանդողի մասնագիտական կոմպետենցիաները,

3.Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցումձեռնարկ», 2006թ

4.Սերգեյ Մանուկյան Ընդհանուր մանկավարժագիտություն- 2005թ.5.Ամիրջանյան
Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ

6. Бордовская Н.В., Реан А.А. Педагогика, 2009

- ✓ տեղեկատվական՝ տպագիր և էլեկտրոնային աղբյուրների մատչելիությունը, հասանելիությունը, դրանցով աշխատելու կարողությունների զարգացումը,
- ✓ հաղորդակցական՝ փոխներգործուն միջավայրի ձևավորումը,
- ✓ ռեֆլեքսիվ-գնահատողական՝ իր և այլ անձանց տեսակետների համարժեք գնահատումը, հետահայաց անդրադարձն ու վերլուծությունը:

Քննադատական մտածողության զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովում են մանկավարժական միշարք պայմաններ՝

- ✓ ուսումնական նյութի պրոբլեմային բնույթն ու տեղեկատվական հագեցվածությունը. հնարավոր է քննարկել, ապացուցել, փաստարկել այն նյութը, որը հիմնված է կոնկրետ փաստերի, տվյալների, աղբյուրների վրա,
- ✓ տեղեկույթի գիտականությունը, արժանահավատությունը, արդիականությունը, սոցիալական նշանակությունը, այսինքն՝ ուսումնական նյութում կենսական հիմնախնդիրների, սոցիալական նշանակություն ունեցող հարցերի արտացոլումը,
- ✓ ուսումնական տեղեկույթի, թեմայի հիմնախնդրի նկատմամբ հետաքրքրության արթնացումը, ուսումնական դրդապատճառների ձևավորվածությունը. եթե սովորողը ցանկանում է իմանալ, ըմբռնել, իմաստավորել, խորանալ նյութի բովանդակության մեջ, ապա նա ստեղծագործական վերաբերմունք է դրսևորում, փորձում է տեղեկատվական տարբեր աղբյուրներից քաղել լրացուցիչ տեղեկույթ, համեմատել, համադրել, եզրահանգումներ անել,
- ✓ կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերում քննադատական մտածողությանը նպաստող բաղադրիչի կարևորումը,
- ✓ կրթական գործընթացի հաղորդակցական բնույթը, ինտերակտիվ միջավայրի ձևավորումը. քննադատական մտածողությունը զարգանում է բանավեճի, քննարկումների արդյունքում: Կարևոր է, որ սովորողներն

ազատ, առանց սխալվելու վախի արտահայտ են իրենց տեսակետը հանդուրժողականության և փոխըմբռնման մթնոլորտում: Այս առումով ուշագրավ է Դ. Կլուստերի այն դիտարկումը, որ քննադատական մտածողությունը սոցիալական բնույթ ունեցող մտածողություն է. ցանկացած միտք ստուգվում և հղկվում է, երբ քննարկվում է ուրիշների հետ,

- ✓ խմբային և անհատական աշխատանքների արդյունավետ համադրումը, խմբային աշխատանքի խրախուսումը. աշխատանքը փոքր խմբերում թույլ կտա առավել վստահ լինել ու նեղ շրջանակում արտահայտել կարծիքը. խմբային տեսակետում կհամադրվեն խմբի անդամների անհատական տեսակետները, իսկ տվյալ աշակերտը ձեռքկբերի համարձակություն և կունենա վստահության զգացում:

Ավագ դպրոցում սովորողների քննադատական մտածողության զարգացման համար նպատակահարմար է կիրառել հետևյալ մեթոդները, աշխատանքի ձևերը՝

- ✓ աշխատանքում, ուսումնական և կենսական իրավիճակներում, գործնականում սովորողներին մղել ուսումնական նյութի շուրջ կանխատեսելու, մեկնաբանելու, ապացուցելու, իր բառերով արտահայտելու, վերլուծելու, համադրելու, համեմատելու, ժխտելու, հիմնավորելու, փաստարկելու, պատճառահետևանքային կապերը գտնելու, արժևորելու, փաստերի հիման վրա եզրահանգելու, հարցեր ձևակերպելու և այլն,
- ✓ տարբեր թեմաներին նվիրված էսսեները, գիտական, գիտահանրամատչելի նյութերի վերաբերյալ կարծիքները, համառոտ և ընդարձակ գրախոսությունները,
- ✓ երկրում, տարածաշրջանում քաղաքական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, կրթական, մարզամշակութային հարցերի վերաբերյալ

քննարկումները, խոսքի՝ համապատասխան ոճին բնորոշ լեզվաքերականական միջոցներով համարժեք ձևակերպումները,

- ✓ գեղարվեստական,վավերագրական ֆիլմերի, հեռուստահաղորդումների, սոցիալական հոլովակների, արդիական թեմաների վերաբերյալ համացանցային նյութերի քննարկումները, այդ նյութերի արժանահավատության ստուգումը տարբեր աղբյուրներով, գրքի, ֆիլմի կերպարի կամ կերպարների, վերջաբանի, գործողությունների, զարգացումների, բախումների լուծման, վերջաբանի վերաբերյալ գրավոր և բանավոր կարծիքը, արտահայտված կարծիքի քննարկումը, մեկնաբանումը, հիմնավորումը,
- ✓ տեքստի առանցքային գաղափարի առանձնացումը, վերլուծությունը, ընդհանրացումը, կենսական իրավիճակներից կամ անձնային փորձից վերցված օրինակներով մեկնաբանումը, ստեղծագործաբար զարգացումը, կանխատեսումը, անդրադարձը, ընդ որում՝ այդ աշխատանքը կարող է կրել բազմազան բնույթ՝ քննադատական կարծիք, վերլուծություն, հավանություն, հերքում, ներկայացում, գնահատում, հիմնավորում, ապացուցում,
- ✓ միևնույ նհիմնախնդրի՝ տարբեր տեսանկյուններից մեկնաբանումը (ստույգ փաստեր, հուզական-գնահատողական մոտեցում, դրական կողմերի, զարգացման հեռանկարների նախանշում, առաջարկություններ, լուծումներ), իր և ուրիշների կարծիքների համեմատումը, հակադրումը, համադրումը, զուգահեռների անցկացումը, անհատական կարծիքների հիման վրա խմբային կարծիքի ձևավորումը, եզրահանգումը, անհատական և խմբային մակարդակում արժևորումը, արտահայտված տեսակետների ընդհանրացումը,

- ✓ միտումնավոր սխալներով, փաստերի խեղաթյուրմամբ շարադրանքի հանձնարարում, որպեսզի սովորողներն ինքնուրույն գտնեն սխալները, շտկեն, հիմնավորեն,
- ✓ բանավեճերը տեղեկույթի քննադատական վերլուծության, փաստարկումների և ապացույցների հիման վրա ձևավորում են տեսակետն արտահայտելուկարողություն,
- ✓ միևնույն թեմայի վերաբերյալ պատմողական, նկարագրական, դատողական շարադրանքները, ուսումնահետազոտական նախագծերը, խմբային քննարկումները, քեյսերը, դերախաղերն ու գործնական խաղերը, գիտագործնական կոնֆերանսները, առցանց ֆորումները:

Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է նաև որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանի որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս սովորողներին լինել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից: Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կրում է որոշակի փոփոխություններ, շատ մեթոդներ վերափոխվում են՝ համապատասխանեցվելով կրտսեր դպրոցականների տարիքային ու անհատական առանձնահատկություններին: Տարրական դպրոցում ուսուցման գործընթացը արդյունավետ, արդիական, աշակերտակենտրոն, սովորողների համար մատչելի ու գրավիչ, հաճելի ու հետաքրքիր դարձնելու համար անհրաժեշտ է վերանայել դասավանդվող առարկաները, ուսումնական ծրագրերը, ուսուցման կիրառվող մեթոդներն ու միջոցները և ժամանակակից ուսուցման գործընթացում նորարարական մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման նպատակն ու անհրաժեշտությունը:[3]

Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է որպես տարրական դպրոցում կիրառելի ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանի որ այն ուղղված է սովորողների պասսիվ վերարտադրողի դերը ակտիվ մասնակցի դերով

---

[3] Յ.Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցումձեռնարկ», 2006թ

փոխարինելուն, սովորողների բնականոն զարգացման համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն, երեխաների տարիքային ու անհատական առանձնահատկություններին համապատասխան պայմաններ, աշխատանքի տեմպ ու կազմակերպման ձև ապահովելուն:

Քննադատական մտածողության տեխնոլոգիայի մեթոդները խմբավորվել են նաև հիմք ընդունելով «Հանրակրթության պետական չափորոշչի բաղադրիչները: Այսպես, օրինակ՝

- գիտելիքների համակարգ ձևավորող մեթոդներն են՝ մտավոր գրոհ, փոխգործուն նշաններ, խմբավորում և այլն:
- ճանաչողական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ Վեննի դիագրամ, խորանարդում, քառաբաժանում, պրիզմա, մանրապատում /կմախք/ և այլն:
- հաղորդակցական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ հարցադրումներով ուղղորդված ընթերցանություն, «Հաստ» և «բարակ» հարցեր և այլն:
- համագործակցային կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ ջիգսո /խճանկար/, շրջանաձև շարադրանք և այլն:
- ստեղծագործական կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ հնգյակ, բանալի բառեր, աքրոստիկոս և այլն:
- ինքնուրույն գործունեության կարողություններ և հմտություններ ձևավորող մեթոդներն են՝ ինքնագնահատման աղյուսակ /ԳՈՒՍ/, երկու աստղ և մեկ ցանկություն և այլն:
- արժեքային համակարգ ձևավորող մեթոդներն են՝ ռուբրիկ, հեղինակի աթոռ մեթոդները:

Եզրակացություն

Այսպիսով, եկանք այն եզրակացության, որ քննադատական մտածողության համակարգը նպաստում է ոչ միայն ուսման արդյունավետության բարձրացմանը, այլև գիտելիքները դարձնում է կիրառելի և նպաստում ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Ակտիվ ուսումնառության շնորհիվ հնարավոր է դառնում ուսման համար նպաստավոր պայմաններ ստեղծել դասարանում: Սրա շնորհիվ աշակերտները

__ Կկարողանան կատարել ուսումնական որոնողական աշխատանք:

__Կկարողանան գտնել իրենց ստացած գիտելիքների և իրենց անձնական կենսափորձի միջև եղած փոխադարձ կապը, որպեսզի գիտելիքը գործնական կիրառություն գտնի:

__ Կդառնան հետազոտող, փնտրող և լուծումներ առաջադրող, որով ուսուցման սուբյեկտ-օբյեկտ մոդելը վերափոխվում է սուբյեկտ-սուբյեկտ մոդելի: Դասարանում գլխավոր դերակատարը կդառնա աշակերտը/ աշակերտակենտրոն ուսուցում/

__Աշակերտները կկարողանան որոշել, թե զանազան տեղեկություններն ինչպես են առնչվում միմյանց հետ:

__Կկարողանան նոր տվյալները, նոր գաղափարները տեղադրել իրենց ունեցած գիտելիքների համակարգում:

__ Կկարողանան քննադատաբար, ստեղծագործաբար և արդյունավետ կերպով իմաստավորել ցանկացած տեղեկություն:

Քննադատական մտածողության համակարգը ուսուցման և ուսումնառության երեք փուլերից բաղկացած մի մոդել է: Մոդելը նկարագրում է ճանաչողական մի գործընթաց, ուր աշակերտները պետք է ներգրավվեն մինչև նյութը սովորելը / խթանում /, նյութը սովորելու ընթացքում / իմաստավորում / և նյութը սովորելուց հետո / կշռադատում /

ԽԻԿ համակարգը որոշ չափով մեզ հիշեցնում է ծանոթ ավանդական դասի կառուցվածքը՝ նախապատրաստական փուլ / խթանում /, նոր դասի հաղորդման փուլ / իմաստավորում / և ամփոփման փուլ / կշռադատում /:

Օգտագործված գրականության ցանկ

1. Լ. Թորքոմյան, <<Մանկավարժական հիմունքներ»
2. Բաբանսկի հատոր առաջին
3. Ա. Հովհաննիսյան, Կ. Հարությունյան, Ս. Խրիմյան և ուրիշներ, «Համագործակցային ուսուցում ձեռնարկ», 2006թ
4. Սերգեյ Մանուկյան Ընդհանուր մանկավարժագիտություն- 2005թ.
5. Ամիրջանյան Զրույցներ սկսնակ ուսուցչի հետ
6. Бордовская Н.В., Реан А.А. Педагогика, 2009